

5.4. ԴՀ տարածքի 2004թ. օգոստոս ամսվա հիդրոօդերևութաբանական պայմանները

Ըստ ԴՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, 2004թ. օգոստոսին օդի ամսական միջին ջերմաստիճանը բարձր է եղել նորմայից 1-2 աստիճանով, լեռնային առանձին շրջաններում և երևանում՝ 3 աստիճանով:

Ամսվա ընթացքում հանրապետությունում պահպանվել է բարձր ջերմաստիճանային ֆոնը:

Առավելագույն ջերմաստիճանը գրանցվել է Արարատյան դաշտում և Սյունիքի հովիտներում և կազմել $+35 +37^{\circ}\text{C}$, Սյունիքի նախալեռներում, Լոռիում, Տավուշում, Արցախում և լեռնային շրջաններում՝ $+28 +31^{\circ}\text{C}$:

Միայն ամսի 13-14-ին և 26-27-ին օդի օրական միջին ջերմաստիճանը ցածր է եղել նորմայից 2-4 աստիճանով: Նվազագույն ջերմաստիճանը լեռնային շրջաններում և Լոռիում գրանցվել է $+5 +9^{\circ}\text{C}$, Տավուշում և Սյունիքի նախալեռներում՝ $+10 +15^{\circ}\text{C}$, Արարատյան դաշտում, Սյունիքի հովիտներում և Արցախում՝ $+15 +18^{\circ}\text{C}$:

Ամսական տեղումների քանակը Շիրակում, Լոռիում, Տավուշում և Ուրցածորում (Արարատի մարզ) եղել է նորմայից ավել և կազմել նորմայի 108-134%-ը, Սևանում և Զրազդանում այն կազմել է նորմայի 83-87%-ը, Գեղարքունիքում, Կոտայքում, Արագածոտնում՝ 29-67%-ը: Արարատյան դաշտում և Սյունիքում ամսական տեղումների քանակը պակաս է եղել նորմայից և կազմել նորմայի 6-27%-ը:

Օգոստոսին առանց տեղումների եղանակ դիտվել է ամսի 8-ին, 10-12-ին, 15-24-ին և 27-31-ին:

Օգոստոսի 3-ին՝ Դիլիջանում (Տավուշի մարզ), 4-ին՝ Զրազդանում (Կոտայքի մարզ), 5-ին՝ Տաշիրում (Լոռու մարզ) դիտվել է կարկուտ: Կարկուտի տրամագիծը Դիլիջանում կազմել է 8 մմ, Տաշիրում՝ 25 մմ:

Ամսի 3-ին, 4-ին, 12-ին, 21-ին և 25-ին՝ Արարատյան դաշտում, Ապարանում (Արագածոտնի մարզ) և Աշոցքում (Շիրակի մարզ) դիտվել է քանու ուժգնացում: Քանու արագությունը հասել է 12-16 մ/վրկ, պոռթկումները՝ 20-21 մ/վրկ:

Հանրապետության գետերի մեծ մասում միջին ամսական ելքերը կազմել են իրենց նորմաների 80-100%-ը:

Սևանա լճի մակարդակն իջել է 10 սմ-ով և 2004թ. օգոստոսի 31-ի դրությամբ կազմել 1897.87 մ, որն 2003թ. նույն օրվա համեմատ բարձր է եղել 47 սմ-ով:

**ԴՀ ազգային վիճակագրական
ծառայության նախագահ**

Ս.Մնացականյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ
2004 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՕԳՈՍՏՈՍԻՆ**

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՍԱԿԱՆ ՁԵԿՈՒՅՑ

Թողարկման պատասխանատու՝

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության
աշխատակազմի անվիոփի վիճակագրության,
հրապարակումների և մարկետինգի բաժին

Տպագրված է՝

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության
աշխատակազմի տպագրակազմարարական և
պատճենահանման աշխատանքների բաժնում:

Թուղթ՝ օֆսեթ 1: Չափսը՝ 21 x 29.7: Տպաքանակը՝ 160 օրինակ:

Հանձնված է տպագրության 27.09.2004թ.